Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԱԼԲԵՐՏ ՅԱՎՈՒՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Նոյեմբերի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն Հոգևոր Խորհրդի և Սուրբ Էջմիածնի միաբանության անունից ցավակցական գիր է հղել անվանի արվեստագետ Ալբերտ Յավուրյանի հարազատներին, մերձավորներին ու գործընկերներին:

Հայրապետական գրում մասնավորապես ասվում է. «*Հոգելույս Ալբերտ Յավուրյանը մեր ժողովրդի կողմից սիրված ու գնահատված էր որպես տաղանդաշատ կինոօպերատոր և արվեստագետ, ով իր հայրենապատում ֆիլմերով մեծ ավանդ և մնայուն հետք է թողել հայ կինեմատոգրաֆիայի պատմության մեջ: Ալբերտ Յավուրյանի ֆիլմերը մեծապես գնահատվել են նաև օտար հանդիսատեսի կողմից՝ ներկայացվելով զանազան միջազգային փառատոներում և մրցույթներում:*

Մենք անձնապես ճանաչել ենք Ալբերտ Յավուրյանին որպես ազնիվ և բարեպաշտ, Հայրենիքի ու հայրենական ավանդների հանդեպ մեծ սեր ունեցող անձի, ով իր հոգում կրում էր Հայաստան մեր երկրի լուսավոր գալիքի երազը:

Աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ Ամենողորմ Տերը արարչական Իր սիրով և անսահման գթությամբ երկնային լուսեղեն հարկերում ընդունի հանգուցյալի հոգին և Իր Սուրբ Հոգու մխիթարությունն ու սփոփանքը պարգևի Ձեզ և վշտակիր բոլոր հոգիներին»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ